ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/09

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.12.2019թ. թիվ 26/26-1/21641-2019 գրությամբ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու՝ Պատվիրատու) 25.12.2019թ. թիվ ՊՆ/02/2970-2019 գրության հիման, վրա 26.12.2019թ. թիվ 26/26-1/21641-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին (հետայսու՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/09 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 11:40-ին և 24.01.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.12.2019թ. թիվ ՊՆ/02/2970-2019 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի միջև 17.09.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-8/7-3 գնման պայմանագրի 2.1.7.1 կետերի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. դեկտեմբերի 20-ին միակողմանի լուծել է N ԳՀԱՊՁԲ-8/7-3 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնելով, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 23.12.2019թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/09 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 11:40-ին և 24.01.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի միջև 17.09.2019թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ-8/7-3 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պատվիրատուի կողմից 23.12.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԳՀԱՊՁԲ-8/7-3» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2019թ. թիվ 26/26-1/21641-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.12.2019թ. թիվ ՊՆ/02/2970-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի միջև 17.09.2019թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ-8/7-3 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի գինը սահմանվել է 750 000 ՀՀ դրամ:

Պայմանագրի Հավելված 1-ի՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ 5 հատ դրոշների /զորամասի մարտական դրոշ/ մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. հոկտեմբեր ամիսը:

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի վարչության պետը 19.12.2019թ. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ աշխատակազմից ստացված առ 12.12.2019թ. թիվ ՊՆ/510ԱՇ-1218 գրությամբ առաջարկել է՝ ՀՀ ՊՆ և «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի միջև 17.09.2019թ. կնքված ԳՀԱՊՁԲ-8/7-3 պայմանագրով մատակարարման ենթակա սակայն չմատակարարված 5 հատ «Զորամասի մարտական դրոշ» ապրանքատեսակի մասով սկսել միակողմանի լուծման գործընթաց՝ ապրանքները սահմանված ժամկետում չմատակարարելու հիմքով, ինչպես նաև հայտնել է, որ 13.12.2019թ. դրությամբ ապրանքների ընդունման գործընթացը կասեցվել է և դրանից հետո ապրանքներ չեն ընդունվելու:

Ամփոփելով հայտնել է, որ հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները, առաջարկում է հանձնարարել ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչությանը՝ Ընկերության հետ կնքված ԳՀԱՊՁԲ-8/7-3 ծածկագրով պայմանագիրը 13.12.2019թ. դրությամբ միակողմանի լուծել՝ մատակարարման ենթակա սակայն չմատակարարված 5 հատ «Զորամասի մարտական դրոշ» ապրանքատեսակի մասով:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Ընկերությանն ուղղված 23.12.2019թ. թիվ ԴՎԱ/5635 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի միջև 17.09.2019թ. կնքված ԳՀԱՊՁԲ-8/7-3 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը 2019թ. հոկտեմբեր ամսին պետք է մատակարարեր 5 հատ դրոշներ «Զորամասի մարտական դրոշ», սակայն ընդհանրապես չի մատակարարել:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7.1 կետի բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. դեկտեմբերի 20-ին միակողմանի լուծել է ԳՀԱՊՁԲ-8/7-3 պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 23.12.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԳՀԱՊՁԲ-8/7-3» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն վաճառող կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>30 օրից ավելի</u>,***

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի միջև 17.09.2019թ. կնքված ԳՀԱՊՁԲ-8/7-3 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի Հավելված 1-ի՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ ***2019թ. հոկտեմբեր ամիսին*** մատակարարել 5 հատ դրոշներ /զորամասի մարտական դրոշ/ 750 000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամ, սակայն Ընկերությունը Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ՝ ***23.12.2019թ.***, ընդհանրապես մատակարարումներ չի իրականացրել:

Այսպիսով՝ վերը նշված փաստերով պայմանավորված գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.12.2019թ. թիվ 26/26-1/21641-2019 գրությամբ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**